ԱՂԶՆԻՔԸ ՍԵՊԱԳԻՐ ՇՐՋԱՆՈՒՄ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան հատվածը, որ ամփոփվում է Հայկական Տավրոսի և Արևմտյան Տիգրիսի միջև, խեթական աղբյուրներում կոչվում է Alse, Alše *կամ* Alşija, *ասորեստանյան աղբյուրներում՝* Alze, *ուրարտականներում՝ նույնպես* Alze *կամ* Alzine, *որը թե՛ անվամբ և թե՛ զբաղեցրած տարածությամբ փաստորեն համապատասխանում է հետագայի Մեծ Հայքի Աղձնիք նահանգին։*

Գիտական գրականության մեջ խոսվել է ոչ միայն Աղձնիքի անվան ծագման և ստուգաբանության, այլև նրա խաղացած դերի ու նշանակության մասին։ Օրինակ, Վ. Բելքը այդ կապակցությամբ գրում է. «Շատ քիչ ծառայություն ունին աշխարհագիրք և պատմության քննիչք Աղձնեաց վերա։ Ամեն բանե առաջ մեր գործը պիտի ըլլա՝ քննել, թե արդյոք այդ նահանգի անվան մեջ երկրի նախահայ անուն մը ծածկված է, թե ոչ»[1]։ Իսկ Հ. Հյուբշմանի մոտ կարդում ենք. «Աղձնիք միշտ նահանգի անուն է, որովհետև Աղձնիք անունը, որ հոգնակի միայն գործածված կա, երկիր կցուցանե և Աղձնի եզակին չունի, ուստի գեթ պատմական ժամանակներուն մեջ կերևա, թե ժողովրդի մը անուն համարված չէ և կրնանք բնիկ երկրանուն համարիլ»[2]։ Համաձայն մի ուղեգրության, Աղձնիքի անվան ծագումը կապված է Արզն և Քեղ գավառներում գոյություն ունեցող հանքերի հետ[3], որը, իհարկե, ընդունելի համարել չի կարելի։

Ինչպես ասվեց, Աղձնիքը առաջին անգամ հիշատակվում է խեթական արձանագրություններում։ Այսպես, խեթական արքա Սուպպիլուլիումա I-ի (մ. թ. ա. XIV դ.) աքքադերեն արձանագրություններից մեկում այն հիշատակվում է որպես Ալսե երկիր, որը տարածվում է Արածանիի ստորին հոսանքներում գտնվող Իսուվա երկրի և Արևմտյան Տիգրիսից հարավ գտնվող Միտանիի պետության միջև[4]։ Ինչ վերաբերում է Աղձնիքի զուտ խեթական անվանը, ապա այն արձանագրություններում հանդիպում է Ալծիյա ձևով, որտեղ վերջին «յա»-ն խեթերենի պատկանելիություն ցույց տվող ածանցներից մեկն է[5]։ Աքքադական արձանագրություններում Աղձնիքի տարածքը (առանց անունը նշելու), որպես շուբարիական երկիր, հիշատակվում է Ադադներարի I-ի (1307—1275 թթ. մ. թ. ա.)[6] մոտ[7], կապված Աշուրուբալլիտ I-ի (1365—1330 թթ. մ. թ. ա.) և Ալշեի տիրակալի միասնական ուժերով Միտանիի պետության

---

1 *Վ. Բելք, Աղձնիք («Հանդես ամսօրյա», 1904, էջ 66)։*

2 *Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, էջ 74։*

3 *Տե՛ս Պետրոս Կալոկեցի, Ասիական ճանապարհորդութիւն ի հայրենիս, Կ. Պոլիս, 1881, էջ 63։*

4 В. Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, с. 114—115.

5 *Նույն տեղում, էջ 107, ծան. 255։*

6 Э. Бикерман, Хронология Древнего мира, М., 1975, с. 187. *Հին Արևելքի տիրակալների գահակալության տարեթվերը, բացառությամբ Ուրարտուի արքաների, վերցրել ենք այս աշխատությունից։*

7 И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту («Вестник древней истории», 1951, № 2—4) (*այսուհետև՝* АВИИУ), № 1.

կործանման հետ, որը տեղի է ունեցել Սուպպիլուլիումա I-ի ժամանակ[8]։ Աքքադական արձանագրություններում Աղձնիքը (Ալզե ձևով) առաջին անգամ հիշատակվել է Թուկուլթի-Նինուրթա I-ի (1244—1208 թթ. մ. թ. ա.) արձանագրություններում, որպես մեկը շուբարիական այն երկրներից, որոնք պարտություն են կրել Ասորեստանի արքայից[9]։ Աղձնիքը (նույն Ալզե ձևով) հանդիպում է նաև Թիգլաթպալասար I-ի (1115—1077 թթ. մ. թ.ա.) արձանագրություններում, կապված մուշքերի առաջխաղացման, Աղձնիքն ու հարևան երկրները գրավելու և այնտեղ բնակություն հաստատելու հետ, իրադարձություն, որը տեղի է ունեցել Ասորեստանի արքայի գահակալությունից ուղիղ 50 տարի առաջ, այսինքն՝ մ. թ. ա. 1165 թ.[10]։ Թիգլաթպալասար I-ը իր արշավանքների ու ավարառությունների առնչությամբ հետագայում էլ մի քանի անգամ հիշատակում է Աղձնիքը (միևնույն Ալզե ձևով)[11]։

Աղձնիքը (Ալզե ձևով) հանդիպում է ավելի ուշ շրջանում ևս՝ Ադադներարի II-ի (911—891 թթ. մ. թ.ա.)[12], Սալմանասար III-ի (858—824 թթ. մ. թ. ա.)[13] արձանագրություններում, Ասորեստանի էպոնիմների քարակոթողների վրա[14] և Սարգոն II-ի (721—705 թթ. մ. թ. ա.) լրտեսների զեկուցագրերում[15]։ Իսկ Աշուրնաձիրապալ II-ի (883—852 թթ. մ. թ. ա.) արձանագրություններից մեկում, Աղձնիքը նշված է ոչ թե ընդունված Ալզե, այլ Ալշա ձևով[16]։ Տվյալ տեղանունը, ամենայն հավանականությամբ, ծագում է խեթական Ալշե>*Ալշա ձևից, «լ» և «շ» հնչյունների առնմանության հետևանքով՝ Ալշե>*Ալշա>Աշշա։

Աղձնիքը հիշատակվում է նաև ուրարտական աղբյուրներում։ Այսպես, Ուրարտուի հզոր արքաներից մեկը՝ Մինուան (810—786 թթ. մ. թ. ա.), Աղձնիքը (միևնույն Ալզե ձևով) հիշատակում է կրկնօրինակ երկու արձանագրություններում, կապված Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում իր կատարած նվաճումների հետ[17]։ Սակայն Մինուան մի ուրիշ արձանագրության մեջ, որը, հավանաբար, մեզ չհասած նրա տարեգրության հատվածներից մեկն է[18], Աղձնիքը հիշատակում է Ալզինե ձևով[19], այսինքն, ուրարտերենի՝ պատկանելիություն ցույց տվող -ինե ածանցով. Ալզե+ինե=Ալզինե, որն առհասարակ բնորոշ է ուրարտերենին։ Հենց այս ձևից էլ հետագայում հայերենի տեղանվանակերտ -ք հոգնակիության ցուցիչով և ձայնավոր -ի- միջածանցով, ինչպես նաև զ>ձ փոփոխությամբ, որը հատուկ է ուրարտա-հայկական անցումային շրջանին, և լ>ղ հնչյունափոխությամբ, որը բնորոշ է հին հայերենին, ստացվում է հետագայի Աղձնիք ձևը. Ալզե+ինե>Ալզինե, Ալզինե+ի+ք>*Ալզինիք>*Ալձինիք>*Ալձընիք>*Աղձնիք։

Մեզ հասած դրավոր տվյալներով կարելի է մոտավորապես պարզել, թե ինչ տարածք է ունեցել Աղձնիքը սեպագիր շրջանում։ Օրինակ, Թիգլաթպալասար I-ը, հիշելով մուշքերին, ասում է, որ նրանք, իջնելով Ալզե երկրի լեռնե-

---

8 АВИИУ, № 1, *ծան. 18.*

9 АВИИУ, № 3, 4, 5, 6, 7.

10 АВИИУ, *№ 10 (I, տող 62 և հաջ.).*

11 АВИИУ, *№ 10 (II, տող 89 և հաջ.), 11, 12.*

12 АВИИУ, № 21.

13 АВИИУ, *№ 28 (տող 35 և հաջ.).*

14 АВИИУ, № 40 (д, е).

15 АВИИУ, *№ 50 (նամակ № 4).*

16 АВИИУ, *№ 23 (III, տող 92 և հաջ.), ծան. 61.*

17 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960 (*լրացումները նայել՝* «Вестник древней истории», 1971, № 3, 4) (*այսուհետև՝* УКН), № 372, *տող 22, 24,* № 373, *տող 20, 23.*

18 УКН, *էջ 150.*

19 УКН, № 28, лс., *տող 8.*

րից, անցնում են Տիգրիս գետը և նվաճում Կադմուխե երկիրը[20]։ Սա նշանակում է, որ Ալզեի հարավային սահմանը անցնում է Արևմտյան Տիգրիս գետով և համապատասխանում է Աղձնիք աշխարհի հարավային սահմանագծին։ Այնուհետև հայտնի է, որ մուշքերը Եփրատի վրայով են մուտք գործել Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասը[21]։ Ուստի ենթադրում ենք, որ Աղձնիքի արևմտյան սահմանը անցել է հենց Եփրատ գետով։ Ինչ վերաբերում է Աղձնիքի հյուսիսային սահմանին, ապա փաստերով հաստատվում է, որ այն անցել է Հայկական Տավրոս լեռնաշղթայով։ Այսպես. Սալմանասար III-ը, Աղձնիքի տարածքով մտնելով Արածանիի հովիտը, վկայում է, որ անցել է Ալզե երկրի լեռնանցքով[22]։ Եվ քանի որ այդ լեռնանցքը գտնվել է Հայկական Տավրոսի արևմտյան հատվածում՝ Սովք լճի մոտակայքում, ապա կարելի է եզրակացնել, որ Աղձնիքի հյուսիսային սահմանի արևմտյան հատվածը, իրոք, եղել է Հայկական Տավրոսի համապատասխան վայրը։ Սակայն, պետք է նկատի ունենալ, որ միևնույն լեռնանցքը կոչվում է նաև Ենզիտե երկրի լեռնանցք[23]։ Հետևաբար, այն ընկած է Ալզե (Աղձնիք) և Ենզիտե (Անձիտ) երկրների միջև ու բնականաբար կոչվելու էր երկուսի անունով էլ, նայած թե ո՞ր երկրի կողմից էին մոտենում նրան։ Եվ քանի որ Ենզիտե երկիրը գտնվել է Իշուա երկրի կազմում[24], իսկ Իշուան իր հերթին տարածվել է Արածանիի ստորին ավազանում[25], ապա ինքնըստինքյան Ենզիտե երկիրը գտնվել է Հայկական Տավրոսից հյուսիս ընկած հատվածում, հիշյալ լեռնանցքի մոտ։ Ուստի Ալզե երկիրը գտնվել է այդ լեռնանցքի մոտ, այն է՝ Հայկական Տավրոսի արևմտյան հատվածից հարավ ընկած տարածքում։ Ինչ վերաբերում է Ալզե երկրի հյուսիսային սահմանի արևելյան հատվածին ու արևելյան սահմանին, ապա դրանք որոշվում են հստակորեն և իրենց մանրամասնությունների մեջ զարմանալիորեն համընկնում են հետագայի Աղձնիքի համապատասխան սահմանների հետ։ Այսպես, օրինակ, հայտնի է, որ Մինուան իր երկու համանման արձանագրություններում հիշատակում է Կուտումե քաղաքի կործանումը, այնտեղից Ալզե երկրի նվաճումը և հիշյալ Կուտումե քաղաքի համար ամրոցի կառուցումը[26]։ «Կործանեց Կուտումե (քաղաքը), գրավեց Ալզե (երկիրը)<...> կառուցեց ամրոց Կուտումե (քաղաքի) համար»[27]։ Հետևաբար մենք այստեղ ունենք երեք առանձին հասկացություն. այն է՝ Ալզե երկիր, Կուտումե բնակավայր և Կուտումե բնակավայրի նորաշեն ուրարտական ամրոց։ Բարեբախտաբար, այս եռյակ հասկացությունը միևնույն ձևով կրկնվում է հայկական աղբյուրներում։ Հայտնի է, որ Գագիկ Արծրունին (908—943 թթ.), տեսնելով «...ամրոց մի յիշխանատանն Աղձնեաց ի գեօղն Կուտում կոչեցեալ»[28], քանդել է տալիս այդ ամրոցը և նրա սրբատաշ քարերը նախ ցամաքով հասցնում լճափ, ապա նավակներով տեղափոխում 180 կմ հեռավորության վրա գտնվող Աղթամար կղզին և 915—921 թթ. կառուցում Աղթամարի հրաշակերտ Սուրբ Խաչ

---

20 АВИИУ, № 10 (I, տող 62 և հաջ.).

21 О. О. Карагезян, Фракийцы на юго-западе Армянского нагорья («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 217—233).

22 АВИИУ, № 28 (տող 35 և հաջ.).

23 АВИИУ, № 28, ծան. 1։

24 АВИИУ, № 27 (II, տող 40).

25 АВИИУ, № 10, ծան. 36։

26 УКН, № 372, տող 24, 25—26, № 373, տող 22—23, 25։

27 Հ. Հ. Կարագյոզյան, Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին («Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», Երևան, 1981, արձ. № 15, էջ 33)։

28 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Տփղիս, 1917, էջ 484։

եկեղեցին[29]։ Եվ եթե Ալզե երկիրը Աղձնիքն է, ինչպես ասվեց վերևում, ապա միայն մնում է հիշել ուրարտագիտության մեջ հիմնավորապես ապացուցված և ընդունված այն տեսակետը, ըստ որի Ալզե երկրի Կուտումե բնակավայրը հետագայի Աղձնիքի Կոտոմ գյուղն է, իսկ Կուտումե բնակավայրի ուրարտական ամրոցը՝ Կոտոմ գյուղում Գագիկ Արծրունու տեսած և քանդած ամրոցը[30]։ Ընդ որում, Կոտոմ գյուղը գոյություն է ունեցել նաև հետագայում («Երկու այս գեօղք Թուխ և Կոտոմ նովին անուամբ կան մինչև ցայսօր՝ ոչինչ հեռի ի ծովէն Բզնունեաց»)[31], ինչպես և կա մեր օրերում[32]։ Հետևաբար, Ալզե երկրի հյուսիսային սահմանի արևելյան հատվածը անցել է Կուտումե բնակավայրի մոտակայքով, ճիշտ այնպես, ինչպես հետագայում Կոտոմ բնակավայրը եղել է Աղձնիքի համար։ Ընդ որում, ինչպես որ Կուտումե բնակավայրն է գտնվել Ալզե երկրի կազմում, այնպես էլ Կոտոմ գյուղը գտնվել է Աղձնիք նահանգի սահմաններում։ Իսկ սա շատ կարևոր հանգամանք է ճշտությամբ որոշելու ոչ միայն Ալզե երկրի հյուսիսային սահմանի արևելյան հատվածը, այլև դրան հարող վայրերի սահմանները։ Ուստի, եթե Ալզե երկրի հյուսիսային սահմանի արևմտյան հատվածը անցնում էր Հայկական Տավրոսի արևմտյան մասով, և հյուսիս-արևելքում Կուտումե բնակավայրը գտնվում էր նույնպես նրա սահմաններում, ապա կաբելի է եզրակացնել, որ Ալզե երկրի հյուսիսային սահմանը անցնում էր հենց Հայկական Տավրոսով։ Արևելյան սահմանը հավանաբար անցնելու էր Կուտումե (Կոտոմ) բնակավայրից մինչև Արևմտյան և Արևելյան Տիգրիսների միախառնման շրջանը, մոտավորապես այնպես, ինչպիսին որ եղել է հետագայում Աղձնիքի արևելյան սահմանը։

Այսպիսով, սեպագիր աղբյուրների տվյալները ցույց են տալիս, որ հնագույն Ալզե կամ Ալզինե երկրի տարածքը գրեթե նույնությամբ համընկնում է Մեծ Հայքի Աղձնիք նահանգի տարածքի հետ, և նրա սահմանները ավելի քան 1200 տարվա ընթացքում (մ. թ. ա. VIII—մ. թ. IV դդ.) մեծ փոփոխություն չեն կրել։

Հարկ ենք համարում ստորև ներկայացնել Աղձնիքի տարածքի ավելի փոքր «երկրների» մի շարք բնակավայրեր (քաղաքներ, ամրոցներ, գյուղեր)։

Անգանու—Հիշատակում է Թիգլաթպալասար III-ը (745—724 թթ. մ. թ. ա.)[33]։ Համարվել է Ուրարտուի ամրոցներից մեկը և, հավանաբար, գտնվել է ներկայիս Էնջենե բնակավայրի տեղում[34]։

Աշուրիիշա—Հանդիպում է Թիգլաթպալասար III-ի արձանագրություններում։ Այն կառուցել է Թիգլաթպալասար III-ը և ինքն էլ այդպես անվանել[35]։ Քաղաքը գտնվել է Արևմտյան Տիգրիսից հյուսիս, հետագայի Բաղեշ գետի ավազանում։ Նրա անունը պահպանվել է Աղձնիքի Քիշ քաղաքի անվան մեջ[36]։

Իենզու—Նշվում է նույն Թիգլաթպալասար III-ի մոտ[37]։ Նույնպես համարվել է Ուրարտուի ամրոցներից մեկը։ Հավանաբար գտնվել է Շուբրիայի տարածքում[38]։

---

29 Н. М. Токарский, Архитектура Армении, IV—XIV вв., Ереван, 1961, с. 212.

30 О. О. Карагезян, Город Кутуме урартских источников («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 3, էջ 191—192).

31 Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ. 1822, էջ 86, ծան. 1։

32 Y. M. Thierry, Monastéres Arméniens du Vaspurakan, VI („Revue des études Arménienne", Nouvelle Série, t. IX, Paris, 1972, տախտ. XXXV, էջ 156-ից հետո).

33 АВИИУ, № 42 (տող 28 և հաջ.).

34 АВИИУ, («Вестник древней истории», 1951, № 4, с. 284).

35 АВИИУ, № 42 (տող 28 և հաջ.).

36 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 89, 114։

37 АВИИУ, № 42 (տող 28 և հաջ.).

38 АВИИУ, № 50 (32, ծան. 3).

Իրիդու—*Սալմանասար I-ի (1274—1245 թթ. մ. թ. ա.) արձանագրություններում հիշվում է որպես Միտաննի պետության ամրոց*[39]։ *Գտնվել է Արևմտյան Տիգրիսի և նրա հյուսիսային վտակ Քաղիրթ (Բաթման) գետի միախառնման շրջանում*[40]։ *Հետագայում այս ամրոցի մասին որևէ տեղեկություն չի պահպանվել։*

Թաիդու—*Սալմանասար I-ի արձանագրություններում նշվում է որպես Միտաննի պետության ամրոցներից մեկը*[41]։ *Վկայված է նաև Աշուրնաթիրապալ II-ի մոտ (Թիդու ձևով) որպես Նաիրի երկրի ամրոց*[42]։ *Գտնվել է Արևմտյան Տիգրիսի հյուսիսային ափին, Ամիգից (Դիարբեքիր) արևելք*[43]։ *Ավելի ուշ շրջանում չի հիշատակվում։*

Կուտումե—*Ասվեց, որ հիշատակվում է Մինուայի կրկնօրինակ արձանագրություններում*[44]։ *Գտնվել է Աղձնիքի հյուսիս-արևելյան ծայրամասում և տեղով ու անվամբ համապատասխանում է հետագայի Կոտում բնակավայրին*[45]։ *Մինուայի մոտ նշված են Աղձնիքի տարածքում գտնվող մի շարք այլ բնակավայրեր ևս՝ Կալիբիլա, Արպուլա, Խուլմերու, Երունե, Կիրպունունե*[46], *բայց դրանց կոնկրետ տեղը հայտնի չէ։*

Նեխեբիա—*Հիշատակվում է Սարդուրե II-ի (764—735 թթ. մ. թ. ա.) Գանձադուան տարեգրության մեջ*[47]։ *Եղել է Աղձնիքի տարածքում ավելի ուշ կազմակերպված Արմե պետական միավորի քաղաքներից մեկը, հավանաբար՝ մայրաքաղաքը։ Ավելի հնում Նիխիրյա ձևով հիշատակված է Խաթթուսիլի III-ի (XIII դ. մ. թ. ա.) կողմից՝ Ուրխի-Թելուպի և Մեխրի երկրի թագավորի կնքած պայմանագրում*[48]։ *Գտնվել է հետագայի Նփրկերտ քաղաքի տեղում, որից էլ ծագում է Նփրկերտի անունը*[49]։

Սարդաուրի—*Նշում է միևնույն Թիգլաթպալասար III-ը՝ Աշուրիքիշա քաղաքի հետ միասին*[50]։ *Այն գտնվել է Արևմտյան Տիգրիսի հյուսիսային ափին և ինչպես տեղով, այնպես էլ անվամբ համընկնում է այժմյան Սարդեվա (Սարդեբար) բնակավայրի հետ*[51]։ *Միևնույն արձանագրության մեջ վկայված են այլ բնակավայրեր՝ Քաշթիրրու, Պարիսու, Մանտուպա և այլն*[52]։ *Բայց դրանք ևս տեղորոշված չեն։*

Ուպումե—*Հիշատակվում է Սալմանասար III-ի արձանագրություններում (որպես Անխիթթե Շուբրիացու քաղաք*[53]) *և Ասարխադդոնի (680—669 թթ. մ. թ. ա.) մոտ*[54]։ *Ուպումեն, որ եղել է Շուբրիայի կենտրոնը, այսինքն մայրա-*

---

39 АВИИУ, № 1, *ծան. 9.*

40 АВИИУ, *քարտեզ՝ էջ 1-ից առաջ։ Ենթադրվում է, սակայն, որ Իրիդու ամրոցը գտնվել է Արևմտյան Տիգրիսի վրա՝ ներկայիս Ռնդվան բնակավայրի տեղում (տե՛ս* Նիկողայոս Ադոնց, *Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 228)։*

41 АВИИУ, *№ 1, ծան. 9, № 26,* ос, *տող 36 և հաջ., ծան. 45.*

42 АВИИУ, *№ 26,* ос, *տող 36 և հաջ.։*

43 АВИИУ, *№ 26, ծան. 45.*

44 УКН, *№ 372, տող 24, 26, № 373, տող 23, 25.*

45 О. О. Карагезян, Город Кутуме урартских источников, с. 191—192.

46 УКН, № 28, вс, *տող 6—10.*

47 УКН, № 156, ДI+ДII, *տող 12.*

48 В. Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, с. 106, 107, 162, 163.

49 Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946, с. 9, 20, 27.

50 АВИИУ, *№ 42 (տող 23 և հաջ.).*

51 E. Forrer, Die Provinzeinteilung des Assyrischen Reiches, Leipzig, 1920, S. 85.

52 АВИИУ, *№ 42 (տող 23 և հաջ.).*

53 АВИИУ, № 29.

54 АВИИУ, № 67 (е, ж), № 69 (а, 1).

քաղաքը, գտնվել է Սասունի լեռներում՝ բյուզանդական շրջանի Աֆումոն բնակավայրի տեղում, որն այժմ կոչվում է Աֆում[55]։

Ուայայս—*Հիշատակվում է Սարգոն II-ի տարեգրություններում*[56] *և Աշուր աստծուն ուղղված ուղերձում*[57], *որը գրված է մ. թ. ա. 714 թ. դեպի Ուրարտու կատարված արշավանքի կապակցությամբ։ Ուայայս ամրոցը գտնվել է Աղձնիքի տարածքում, սակայն նրա կոնկրետ տեղը հայտնի չէ։ Եղել է Ուրարտուի սահմանային նահանգներից մեկի (անշուշտ, Աղձնիքի կամ նրա արևելյան հատվածի) կենտրոնը։ Այն Ռուսա I-ի (735—713 թթ. մ. թ. ա.) ամենախոշոր ամրոցներից մեկն էր*[58]։ *Հենց հիշյալ ամրոցի շրջակայքում էին գտնվում Բարզուրիա, Վալտուկույա, Կուիթթա, Կիպպա և Ասապա ամրոցները*[59], *որոնց ճշգրիտ տեղագրությունը մեզ անհայտ է։*

Ուռուսուանի—*Գիտական գրականության մեջ նույնացվել է Սասուն բնակավայրի անվան հետ*[60]։

Քուլիմերե—*Հիշատակվում է Թիգլաթպալասար III-ի արձանագրություններում*[61], *Ասարխադդոնի մոտ*[62] *և Աշուրբանապալի (668—633 թթ. մ. թ. ա.) գլանաձև արձանագրության մեջ*[63]։ *Քուլիմերե քաղաքը եղել է Շուբրիայի նշանավոր բնակավայրերից մեկը, որը գտնվել է Ուպումեից հարավ, ավելի կոնկրետ՝ Արևմտյան Տիգրիսի հյուսիսային վտակ Բաթման գետի արևմտյան ափին, Նփրկերտի մոտակայքում*[64]։ *Քուլիմերե անունը հետագայում պահպանվել է հայկական Քղիմար քաղաքի անվան մեջ*[65]։

Հին Արևելքի գրավոր աղբյուրներում հիշատակվում են նաև այլ բնակավայրեր (օրինակ, Շուբրիայի Մուրարրիր, Արինու, Թուրխու, Ջաղուրի, Մարխուխա կամ Մարքուխա և այլ քաղաքներ ու ամրոցներ)[66], *որոնք թերևս գտնվել են Աղձնիքում կամ նրա մոտակայքում։ Հետագա մասնագիտական ուսումնասիրությունները ցույց կտան, թե դրանցից որ մեկը կարելի է համարել Աղձնիքին պատկանող բնակավայր։*

АЛДЗНИК В КЛИНОПИСНЫЙ ПЕРИОД

РАФИК НАГАПЕТЯН

Резюме

Данные клинописных, а также армянских источников свидетельствуют, что область Алзе—Алдзник занимала почти одну и ту же территорию. Ее границей с севера была горная цепь Армянский Тавр, с юга—

---

55 АВИИУ, № 29, *ծան. 1.*

56 АВИИУ, *№ 46 (տող 116 և հաջ.).*

57 АВИИУ, *№ 49 (տող 297 և հաջ., 306 և հաջ.).*

58 АВИИУ, *№ 49 (տող 297 և հաջ.).*

59 Thurean-Dangin, Une Relation de la huitiéme Campagne de Sargon, Paris, 1912, *տող 304։*

60 *Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 200։*

61 АВИИУ, № 43.

62 АВИИУ, № 67 (н), № 68 (a, 1).

63 АВИИУ, № 73.

64 E. Forrer., *Նշվ. աշխ., էջ 87։*

65 *Նույն տեղում։*

66 *Դ. Ն. Սարգսյան, Շուբրիայի հասարակարգը, պետական կարգը և բնակավայրերը («Բանբեր Երևանի համալսարանի», 1976, № 3, էջ 29)։*

Западный Тигр, с востока—район слияния Западного и Восточного Тигра, с запада—река Евфрат. В политическом и этническом отношении в данном регионе Армянского нагорья больших изменений не происходило.

На основании первоисточников и специальной литературы можно констатировать, что большая часть топонимов Алзе— Алдзника дошла до нас в неизменном виде, а это означает, что этнический состав данного региона не претерпел сильных изменений. Дошедшие до нас топонимы следующие: Алзе (Алзине)—Алдзник, Ангану—Энджене, Ашшурикиша—Киш, Кутуме—Котом, Нехериа—Нпркерт, Сардаурри—Сардебар, Упуме—Афумон, Усусуани—Сасун (?), Куллимере—Кгимар и т. д. Часть топонимов Алзе—Алдзника, к сожалению, до нас не дошла.